ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N2

**ՀՀՏԿԵՆ ջրային կոմիտեի «Ջրառ» ՓԲԸ-ի կարիքների համար ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ՀՄԱԾՁԲ-20/5 ծածկագրով հրատապության հիմքով պայմանավորված մեկ անձից գնման ընթացակարգով Մերձափնյա ջրանցքի մաքրման և ընթացիկ նորոգման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայությունների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի**

ք. Երևան 24 հունվարի 2020թ.

ժամը. 16:00

***Մասնակցում էին.***

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | **Մ. Առաքելյան** (համակարգում՝ ԳՊ/ԳԱՊ Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ, գնահատման հանձնաժողովի ղեկավար) |
| Անդամներ՝ | **Ս. Մելքոնյան** (համակարգում՝ ԳՊ/ԳԱ Գնման Պատասխանատու/ Գնահատման Աշխատակազմ) |
| | **Գ. Խոսրովյան** (համակարգում՝ ԳՊ/ԳԱ Գնման Պատասխանատու/ Գնահատման Աշխատակազմ) |
| | **Ա. Գևորգյան** (համակարգում՝ ԳՊ/ԲԱ Գնման Պատասխանատու/ Բացման Աշխատակազմ) |
| | **Ն. Համբարձումյան** (համակարգում՝ ԳՊ/ԲԱ Գնման Պատասխանատու/ Բացման Աշխատակազմ) |
| Հանձնաժողովի քարտուղար | **Ն. Նիկոլայան** (համակարգում՝ ԳՊ/ՄՀՄ՝ Գնման Պատասխանատու /Մրցույթի համակարգող ) |

## 1. Հայտերի բացման և գնատման մասին

(Մ. Առաքելյան)

ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ՀՄԱԾՁԲ-20/5 ծածկագրով հրատապության հիմքով պայմանավորված մեկ անձից գնման ընթացակարգով Մերձափնյա ջրանցքի մաքրման և ընթացիկ նորոգման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայությունների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ ք. Երևան Վարդանանց փակուղի 8ա, 6-րդ հարկ հասցեում, 2020 թվականի հունվարի 24-ին, ժամը 16:00-ին:

Գնումն իրականացվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն:

Հայտերի բացումն իրականացվել է www.armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով հրավերով սահմանված կարգով:

### 1.1.Հայտ ներկայացրած մասնակիցների անվանումը

«ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ՀՄԱԾՁԲ-20/5» ծածկագրով հրատապության հիմքով պայմանավորված մեկ անձից գնման ընթացակարգին www.armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

| Հ/Հ | Մասնակիցների անվանումը |
|---|---|
| 1 | «ՋԻՆՋ» ՍՊԸ |

**1.2 Տվյալներ բացված հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին:**

Մասնակիցը www.armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով ներկայացրել է հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0

**1.3 Տվյալներ մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին:**

«ՋԻՆՋ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված փաստաթղթերը կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0

**1.4 Մասնակցի առաջարկած գինը**

(ՀՀ դրամ)

| Հ/Հ | Մասնակիցների անվանումը | Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) | Ընդհանուր գին, ներառյալ ԱԱՀ |
|---|---|---|---|
| 1 | «ՋԻՆՋ» ՍՊԸ | 1 725 000 (մեկ միլիոն յոթ հարյուր քսանհինգ հազար) | 2 070 000 (երկու միլիոն յոթանասուն հազար) |

**1.5 Հայտերի գնահատման մասին:**

Գնահատող հանձնաժողովն ուսումնասիրեց մասնակցի փաստաթղթերը: Ուսումնասիրության արդյունքում «ՋԻՆՋ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված հայտում անհամապատասխանություններ չեն հայտնաբերվել: Մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ընդգրկված չէ գնումների գործընթացին իրավունք չունեցող մասնակիցների ցանկում:

**Գնահատող հանձնաժողով որոշեց՝**

- «ՋԻՆՋ» ՍՊ ընկերության հայտը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0

**1.6 Բանակցությունների վարման մասին:**

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը և «ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ՀՄԱԾՁԲՁԲ-20/5» ծածկագրով հրավերի 8.7 կետը գնահատող հանձնաժողովը որոշեց նիստը կասեցնել և մասնակցին հրավիրել բանակցությունների:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0

**1.7 «ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ՀՄԱԾՁԲ-20/5» ծածկագրով հրատապության հիմքով պայմանավորված մեկ անձից գնման ընթացակարգի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին:**

Գնման ընթացակարգի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0

**2.Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրվա, ժամի և վայրի մասին**

---

(Մ Առաքելյան)

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստ հրավիրել մասնակցին բանակցությունների վարման մասին ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից հաշված երկրորդ աշխատանքային օրվա ժամը 12:00-ին, ք. Երևան, Վարդանանց փակուղի 8ա 6-րդ հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Մ. Առաքելյան

Անդամներ՝ _____ Ս. Մելքոնյան

_____ Գ. Խոսրովյան

_____ Ա. Գևորգյան

_____ Ն. Համբարձումյան

Հանձնաժողովի քարտուղար _____ Ն. Նիկոլայան